ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 61-Ա

<<28>> սեպտեմբերի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ 32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՏԱՍԵՆՅՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ 2 /ԵՐԿՈՒ/ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով, հաշվի առնելով <<Համայնքի երիտասարդներ>> համայնքային զարգացման հասարակական կազմակերպության նախագահ՝ Նելլի Վարդանյանի 2023 թվականի սեպտեմբերի 5-ի դիմումը՝ Լանջիկ բնակավայրում <<Հոլեմ>> ինովացիոն կրթական կենտրոնի ստեղծման դրամաշնորհային ծրագիրը իրականացնելու համար Անի համայնքի Լանջիկ բնակավայրի վարչական շենքում տարածք տրամադրելու վերաբերյալ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող Լանջիկ բնակավայրի վարչական շենքի / կադաստրային ծածկագիր՝ 08-100-044-0001, հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Լանջիկ, փողոց 14, թիվ 5/ ընդամենը 32 քառակուսի մետր մակերեսով երկու աշխատասենյակը անհատույց, 2 /երկու/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել <<Համայնքի երիտասարդներ>> համայնքային զարգացման հասարակական կազմակերպությանը /հետագայում՝ Կազմակերպություն/:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Կազմակերպության հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված աշխատասենյակների անհատույց օգտագործման տրամադրման պայմանագիր:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում Կազմակերպությանը սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<28>> սեպտեմբերի 2023 թ.

քաղաք Մարալիկ